



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

W. J. Keeler

Glen Ellyn



PSO9p

4386

0862

# ԶԵՇՆԱՐԿ

ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ  
ԾԱՂԿԻ ՊԱՏՈՒԱՍՏՄԱՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՀԵԿԱՐՁԱԿՈՒԱԾ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Աշխատասիրեց

ԵԶՆԻՑ ԴԱՀ. ԱԼԽԱԶԵԱՆՑ

Միաբան և Սարգիս Եկեղեցու թիմլիսի

614.4  
4-31

ԹԻՖԼԻՍ, 1904 թ.  
Տպարան «ՀԵՐԱՌՈ», Մազմառան փողոց, № 15.

610  
3-444

$$\begin{array}{r} 61 \\ \times 4 \\ \hline 244 \end{array}$$

СОВЕТСКАЯ СФЕРА ГРИЗИРУЕ  
20 ИЮЛ 1920  
ПОДЛИЧНАЯ ВНОДОСТОКА  
7/11 1922  
С. М. ОВЧИННИКОВ  
У. ИЗСИУ 3211 УЧЧИ

## ԶԵՐՆԱՐԿ

ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ  
ԾԱՂԿԻ ՊԱՏՈՒԱՍՄԱՆ

«Պատուաստումը մի  
ընկերական պարտա-  
ւորութիւնն է»:

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

**Աշխատասիրեց**  
**ԵԶՆԻԿ ԴԱՀ. ԱԼԻԽԱԶԵՍԱՆՑ**

Թիֆլիս, 1904  
Տպարան „Հերուսակ“, Մադարքան փող., 15.  
(39)

4 FEB 2013

3799

Доз. ценз. Тифлисъ, 25-го августа 1904 года



С. С.

Ծաղկահատուքեան հնարող Էպուարդ Զեններ:  
(ծն. 1749—վախ. 1823 թ.)



## 207

Ենձ համար բարոյական պարտաւորութիւն եւ համարութ այս փոքրիկ աշխատորիւն ճօնել Մեծապատի քժ. Արանագինէ Գարդիկեան Մելիումեանի անուանը՝ ինչպէս իմ կողմից երախտազիտորեան մի փոքրիկ նշան ևորս այն սիրադիր աշխատորեան եւ ձրիսպէս ինձ նորիւած ժամերի, որը նա զործ է դրել ծաղկահատորիւնը տեսականապէս եւ զործնականապէս ինձ ուսուցանելիս:

Յ. Յ. Պատասիրովը

## Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Քանի որ մեր հայ ժողովրդի մէջ, մանաւանդ գիւղերում, փոքրահասակ երեխաներ ծաղիկ ընկած ժամանակ շատ զո՞ներ են տաիս եւ շատ մանացումն է լինում, ուստի կարեւոր է, որ մեր ժողովրդի մէջ ծաղկահատութեան օգտակարութեան միտ-



Գէորգ Գ. կարողիկոս

քը տարածուի եւ պահանջ դառնայ: Լաւագոյն կը լինի, եթէ մեր հոգեւոր միջնակարգ դպրոցներու — գէթ վերջն զասարանի սաներին ծաղկահատութեան հետ ծանօթացնեն տեսական եւ գործնական ձեւով, որպէսզի աւարտող սաները, քահանայ դառնալով՝ տարածեն եւ ծաղկահատութեան օգտակարութեան միտքը եւ գործնականապէս նպաստեն ու այլպիսով կարողանան փրկիլ բաղմաթիւ երեխաներին: Երջանկայիշատակ Գէորգ Գ. կաթողիկոսը 1868—1870 թւին գրութեամբ տեղեկանում է Երեւանի նահանգպահետից թէ ո՞վ կարող է եւ ո՞րտեղ կարելի է սովորացնել ծաղկահատութիւնը, որովհետեւ ցանկութիւն ուներ, որ քահանայացուները սովորէին եւ պարտադիր գարձներ այս օգտակար մանագիտութիւնը հոգեւորականներին: Նահանգպապետից իմանում է, որ նոյն բաղարի բժշկապետ Գուլբինսկու մօտ կարելի է սովորել ծաղկահատութիւնը, եւ որ ինքը բժշկապետն էլ պիրով ընդունում է Նորին Վեհափառութեան առաջարկութիւնը, իւր մօտ կանչում է Գերապատիւ Սմբատեան Մեսրովք փարզապետին, որ Երեւանի փոխ Թեմակալն էր (այժմ Արքեպիսկոպոս) եւ պատրիրում է հաւաքել շրջակայ գիւղերից երիտասարդ տիրացուներին եւ յանձնել վերոյիշեալ բժշկապետին եւ սովորելուց յևոյ, ստանալ վկայական ու քահանայ ճեռնազրել տալով, ապա նորից ուղարկել իւրեանց գիւղերը, պատրիրելով որ ըստ զըլանան գործածել այդ օգտակար մասնագիտութիւնը:

Մեսրոպի վարդապետն էլ սիրով ընդունում է Վեհափառի պատերը։ Հաւաքում է տիբացուներին եւ յանձնում է թժշկապետ Գուլբինսկուն Վեհափառի օրհնութեան նամակի հետ, որը սիրով ընդունում է Վեհափառի առաջարկութիւնը։ Այսէս 1868—1870 թուականներին մի քանի խումբ երիտասարդ տիբացուներ, գալիս սովորում էին թժշկապետից ծաղկանառութիւնը, վկայական ստանալով, նոյնպէս գրծիքը եւ ծաղկանալութ, գնում էին Վեհափառի մօտ օրհնութիւն եւ քաշալերութեան խօսքի լսում եւ մի քանիսն էլ քահանայ ծեռնաղրուելով վերադառնուած էին իւրեամց դիւդիքը։ Այսպիսի մարդասիրական ծառայութեան համար Վեհափառից օրհնութեան կոնդակ է ստանուած թժշկապէտ Գուլբինսկին։

Որովհնուած Սմբատեան վարդապետի միջոցով է կատարուել տիբացուների ծաղկանառութեան սովորելը եւ տեղեակ է Գէորգ Գ. կաթողիկոսի չերմ ցանկութեանը, լաւ կը լիներ, որ Նորին Սրբազնութիւնը զարձեալ ծեռնամուխ լինէր նոյն օգտակար մասնագիտութեան տարածման ներկայիս ընծայացուների մէջ եւ Նորին Վեհափառութիւնն էլ չերմ համալսոն եւ զործի սկզբնաւորող դասնար ժողովրդեան բարեկեցութեան ցանկութիւնը կատարելով։

Հենց այս նպատակին ծառայելու համար եւ մեր ովանն օգտակար լինելու նպատակով, եւ աւելի հեշտ միջոց զարձնելու համար՝ վստահացանք այս

գրքոյիլը նուիրել մեր ազգին եւ մանաւանդ կարգակիցներիս։

Այս գրքոյիլը կազմելիս՝ օգտուել եմ հետեւեալ հեղինակութիւններից։ — «Պատմութիւն մարդկային պատուաստման» բժ. Տիգ. Փեշտիմալմանի, Կ. Պոլս, 1884 թ. եւ «Руководство къ изучению осопопрививанія» сост. врачъ М. Щенсновичъ С. П. Б. 1673 г.

**Եղիկ Քեց. Սլխազեանց։**

—————; × ;—————

ԾԱՂԿԸՀԱՏՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Իսկական ծաղկի ոկզբնական կմնդրունը զիտականների ասելով, և ինչպէս երևում է հին ձեռագիրներից՝ եղել է Արաբիան։ Առաջին սկզբնաւորութիւն և երևալը նոյնպէս ինչպէս երևում է ձեռագիրներից, եղել է 572 թւականը և տարածւած մնաց Արաբիայում մինչև 632 թւականը, որի ժամանակ մեծ վնասներ է հասցըել ազգաբնակութեան։ Արաբացոց արշաւանքների հետ միասին անցաւ այդ վնասակար հիւանդութիւնը գէպի Ասորեստան 634 թ. յետոյ Պաղեստին 637 թ. և մինչև անգամ Կոստանդինապօլիս հասաւ 660 թ.։ Այդտեղից անցնում է Հայաստան 635 թ.։ 637 թ. — 651 թւականը անցնում է Կիլիկիա, Միջագէտք, Կարմիր ծովով Եղիպատոս և Աֆրիկայ։ Հնդկաստանն է հասնում 655 թ., այդտեղից 2ինաստան և Գրենլանդիա։ 660—706 թ. Աֆրիկայից անցնում է ամբողջ Միջերկրականը, Զիրուալտար, և վերջապէս 711—738 թ. Եւրոպայ-

է հասնում — Պոլտուգալիա, Փրանսիա, Անգլիա և Սև ծովի եզերքներով մինչև խալ Ռուսաստանն է հասնում։ 1492 թ. գանւելով Ամերիկան անցնում է այդաեղ էլ և ծաղիկը։

Թէ որքան վնասներ է հասցըել ազգաբնակութեան ծաղիկը երկրէ երկիր անցնելով, մեղ ցոյց է տալիս հետեւեալ թուերը։ — Արաբիայում ահազին վնասներ է առեւ, որ մեղ չէ հասել այդ թուերը։ Հնդկաստանում 100,000 ից աւելի հնդիկ զոհ զնաց, Կամչատկայում 1767 թւին 20,000 հոգի մեռան, միմիայն Լոնդոնի մէջ տարէն 2-3000 հոգի էին մեռնում։ Խակ ամբողջ Անգլիայում մի միլիոն բնակչից տարէն 3000 հոգի էին մեռնում։ Պարիզում 1713 թ. մի քանի ամսուայ մէջ 20,000 հոգի մեռան։ Խակ Ռուսաստանում տարէն 200,000 հոգի էին մեռնում։ 1661—1772 թուականը Լոնդոնում մեռել են 2,538,450 մարդ, որից 193,432 հոգի միայն ծաղկից են մեռել։

Առաջներում՝ երբ երեսւմ էր խսկական ծաղիկը, այնպէս էր վախենում նրանից մեր գիւղական ժողովուրդը, ինչպէս խոլերայից, և ճիշտ որ խոլերայի երկիւդէր տարածել ծաղիկը ժողովրդի վրայ, որովհետեւ ահազին զոհեր էր տանում, մի քանիսին կուրացնում էր, միւսներին այլանդակում։ Պէտք էր տեսնել՝ ինչպէս զեղեցիկ սիրում երեխան այլանդակ-

տոմ էր, չեշոտում կամ կուրանում չը պատուաստելուց: Ո՞վ էր այս բոլոր վնասների պատճառը,—ծաղիկը, ինձ կասեն. իսկ ես կասեմ, որ իրանք ծնողներն են պատճառը, որովհետեւ նրանք խուսափել և այժմ էլ խուսփում են ծաղկահատութիւնից:

Մայրեր, մայրեր, օգտուեցէք ծաղկահատութիւնից, որովհետեւ ձեր մասաղ սերունդը դրոնցով ուրախանում էք այժմ, կարող է լացացնել ձեզ, մինչև անգամ անիծել ու հայնանքներ թափել ձեզ վրայ: Չտապեցէք երեխայ ժամանակից ծաղիկ կարել տալ ձեր երեխաներին, եթէ չէք ուզում որ նրանք անիծեն ու նախատեն ձեզ ձեր տգիտութեան համար:

Հին քաղաքակրթւած Զինացիք, որոնց աւելի շուտ յայտնի էր պատուաստումք, իւրեանց սրդոց հազցնում էին ծաղկի թարախով թրջած շապիկներ, կամ ծաղկի փշրանքով լրցնում էին նոցա քթածակերը: Յայտնի էր նոյնպէս և հնգիկներին, որոնց բրամիները (հոգկորականները) բամբակը թրջում էին ծաղկի թարախի մէջ և դնում էին վիրաւորուած բաղկի (ձեռքի) վիրաւորուած տեղերում կամ անց էին կացնում կաշուի տակով թունաւորուած թելեր: Այս տեսակ արհեստը տեղի ևս ծաղկեց Վրաստանում և 2երրեղիստանում, որոնք

լրեանց օրիորդների գեղեցկութիւն պահպանելու համար, զանազան աւելորդապաշտ ծեսերով կտուալում էին պառաւ կանայքը վերոյիշեալ սովորութիւններ:

Թէ նքան անհրաժեշտ էր պատուաստումը հին ժամանակ մեզ ցոյց է տալիս հետեւալ օրինակը.—Կ. Պոլսի անգղիական հիւսալու Մինաթիզիվի կինը (Մարի—Մորթիլ Մօնտավոլ) 1717 թիւն պատուաստել տուեց իւրեկեխային ու այդպէս հիւսանդ զրութեան մէջ տարաւ Անգղիա որից հիւթ առնելով պատուաստեցին ուրիշներին, որով և սովորութիւն դարձաւ Անգղիայում պատուաստումը: Ռուսաց Եկատերինէ և կայսրուհին Անգղիայից պատուաստով է հրաւիրում և պատուաստել է տալիս իրան և թագաժառանգ Պաւելին: Հիւթը վերցնում է պատուաստող մի գիւղացի երեխայից, որն որ կովի ծաղկով վարակուած է լինում և որին կայսրուհին ազնուականութիւն է տալիս: Անգղիացի պատուաստողը կայսրուհուց ստանում է իրեկ վարձատրութիւն 600,000 և 25,000 ռուբլի էլ տարեկան թոշակ և իսկական խորհրդականի ախտղոսը: Այս տեսակ պատուաստումը՝ այսինքն մի երեխայից վերցրած և պատուաստուած մի ուրիշին՝ կոչում է Պատկիհում, որնոր յայտնի էր հին ժամանակ չինացիներին և հայերին և ուրիշ ազգերին ևս:

Հին ժամանակ որ անհրաժեշտ էր համարում ծաղկահատութիւնը, որնոր հազւագիտ էր և շատ տեղեր չըգիտէին, հիմա որ հնարուած է ծաղկահատութիւնը և աւելի հեշտութեամբ է ճարում հիւթը և պատուաստովը, ինչու չէք օգտում և չէք ազատում մատուց սերունդին այդ վիճասակար ախտից:

1896 թւին տօնուեց ծաղկահատութեան գիտի հարիւրամեայ տարեգարձը և այդ հարիւր տարուայ միջոցում շատ քիչ է օգտուել մեր գիւղական ժողովուրգը, շատ քիչ...:

### Յգեիկ բահանայ Ալիսազեանց

### Ա. ՄԱ. ՄԵ.


Ֆաղկանատութեան հնարազ էդուարդ Զենների եւ նրա գիւտի համառօս կենսագրութիւն:

**Է**դուարդ Զենների հայրը քահանայ էր: Էդուարդը ծնւել է 1749 թ. Բերլինի գիւղաքաղաքում: Երեխայ ժամանակուանից էդուարդը զրկում է իւր ծնողներից: Փոքրիկ էդուարդի մեծացնելը և կրթութիւն տալլ յանձն է առնում իւր մեծ եղբայրը: Մինչև 13 տարեկան հասակը նախնական ուսումը առնում էր իւր մեծ եղբօրից, որից յետոյ եղբայրը տալիս է Բերլինի քաղաքի, որը իր ծննդեան քաղաքն էր, միջնակարգ գպտոցը: Էդուարդը աշխատասէր տղայ լինելով, յաջողութեամբ աւարտում է իւր ուսումը, որից յետոյ իւր յանկութեամբ յանձնում է յայտնի վիրարոյժ Լինլէյի մօտ: Էդուարդը շուտով սովորում է բժշկականութիւնը:


Մի օր Եգուարդի բժշկի մօա զալիս է մի գիւղացի հիւանդ կին, Սառա Նելմա անունով, և խորհուրդ է հարցնում իւր տկարութեան մասին: Բժիշկը յայտնում է, որ նա վարակուած է իսկական ծաղկով: Կինը լսելով բժշկի յայտնութիւնը բացականչում է զարմացած: «Անկարելի է, որովհետեւ ևս ունեցել եմ կովի ծաղկի»: Գիւղացու կնոջ այսպիսի պարզ խոստավանութիւնը մեծ տվարութիւն է թուղնում երիտասարդ ուսանողի վրայ: Եգուարդը մտածում է, «յայտնի է որ կովի ծաղկով վարակուածները թիթի կերպով են հիւանդանում և վնաս չէ հասցնում վարակուածներին: Կնոջ այսպիսի հաւատը դէսի կովի ծաղկիլ նշանակում է ամբողջ ժողովուրդն էլ այսպէս է մտածում, երբ որ ժողովուրդի կարծիքը ուղիղ է, նշանակում է՝ եթէ առողջ մարդուն կովի ծաղկահիւթով վարակենք, նա այլիս չի վարակուի իսկական ծաղկով»:

Եգուարդը շաբունակում է աւելի ևս հաստատ կերպով համոզուել իւր մտացածի մասին, որով յայտնում է իւր ուսուցչին իւր մրածողութիւնը, որից էլ քաջալերութիւն է ստանում, շարունակելու իւր մտածողութիւնը և փորձով հաստատելու: Իւր ուսուցչին վնագիշի մօտից տեղափոխում է Լօնդօն յայտնի պլոֆեսոր վիրաբոյժ Զօն Հրնտերի մօա, որին էլ

յայտնում է իւր կարծիքը:  այնում է հետաքրքր երիտասարդ բժշկին իւր խորհուրդով: — «Քննիք, փորձիք, համբերութիւն ունեցիք, զսպիք քեզ, ճշտասէք եղիք և խստապահանջ զէսի քեզ—ինքդ»: Գիւղացու կնոջ հաստատ համոզուներով ասած միաքը, իւր ուսուցչի և երեխի գիւղականի խորհուրդը, քաջալերութիւն է տալիս Եգուարդին ժամանութեամբ հետեւելու իւր մտադրութեան:

 Եգուարդը աւարտելով իւր ուսում՝ բժշկացի կանութեան Ատեստատ (վկայագիր) ստանալով, վկայագաւնում է իւր հայրենի ներկլէլի քաղաքը Շոշը լսելով իւր բարեկամների խորհուրդը՝ «մնալ լունդուն»: Գալով իւր հայրենի քաղաք, հետեւում է իւր մտադրութեան, փորձեր է անում և ինչքան էլ իւր ընկերակիցները ծաղրում էին, յիմարութիւն համարելով Զեննիկի գործերը, նա առաւել ևս աշալընութեամբ հետեւում էր իւր գործին:

Ահա 47 տարեկան Ժրաջան և անվախ Եգուարդը, 1796 թուականին, հանդիսականիների ներկայութեամբ, նրանց մէջ և իւր ուսուցիչների ու թշնամիների, Զեմս քիաս ու թարեկան տղայի թիվ վրայ փորձ է անում, հիւթը վիրցնելով մի զիւղացի կնոջ թից, որնոր վարակուած էր կովի ծաղկով: (Ինչպէս ցոյց է տալիս այս պատկերը:



Եղուարդ Զենների ծաղկահաւատքեան առաջին փառձ  
1796 թիվն.

Զենները վերցնելով ծաղկահիւթը ոչ իսկական ծաղկի բշտիկներից և ոչ կովի ծաղ-

կահիւթից, այլ կովի ծաղկով վարակուածի բշտիկներից, պատուաստելով առողջ երեխային և վարակելով նրան,—յաջող է անցնուամ և առողջանուամ է երեխան,—որով Զենները ուղում է հասաւաել, որ «եթէ ծաղկով վարակուած կովից վերցրած հիւթով պատուաստենք մի առողջ մարզուն և նրանից երկարովին և երբորգին ու յետոյ վերջինի բշտիկներից վերցնենք հիւթը և պատուաստենք մի ուրիշին, դարձեալ կը պաշտպանենք նրան իսկական ծաղկի վարակումից»: Զենների համար ուրախալի անցաւ այս փորձը, որովհետեւ յաջող էր, մնում էր համոզուել և համոզեցնել հանդիսականներին, որոնք կրկին անգամ ևս հաւաքուել էին, որ այդ աղան ապահովէ և չի վարակուի իսկական ծաղկավ: Այս բանի համար՝ Զենները վերցնում է իսկական ծաղկի թարախից և պատուաստում Զեններին: Երեք օր ու գիշեր պատուաստումից յետոյ, անցնում է Զենների համար տանջանքալից զրութեամբ, որն ու լինելու էր նրա համար յաջողութեան կամ անյաջողութեան դէպքը: Եթէ երեխան առողջ մնար, ուրեմն և աղատ կմնար իսկական ծաղկի վարակումից և որով Եղուարդի՝ շարշաբանքով և տանջանքով լի յոյսերը, կը պատկուէին յաջողութեամբ: Իսկ եթէ հիւսնդանար՝ այնժամանակ բոլոր նրա շարչարանքն ու յա-

Հողութեան յոյսնը, զուր պէտք է անցներ և  
խայտաբակւեր իւր ընկելների և աւելի ևս ամ-  
բողջ աշխարհի առաջ:

Ահա, յաջողութեան աստղ է փայլում  
Զենների համար, անցնում է չարչաբանիքի և  
ամենամքալից Յ օր ու գիշերը, զալիս է 4-րդ,  
5-րդ... և այլն օրերը և ֆիպով առողջ է մը-  
նում, որով Զենները հասուատում է, որ եթէ  
մէկին վարակենք կովի ծաղկի հիւթով, նա տ-  
ղատ կմնայ իսկական ծաղկի վարակումից:

Ո՞քան քաղցր է, ո՞քան ուրախալի է,  
մի բազմաատանն և արդարութիւն ապացուցա-  
նող մի երիտասարդի համար, որի փորձը յա-  
ջողութեամբ է պսակւում: Նոյնպէս և եղուարդ-  
Զենները իւր այս յաջող փորձով և արդարու-  
թեամբ յաղթող հանգիսանալով, արժանանում  
է ամբողջ աշխարհի կողմից վառքի և պատի:  
Ամեն ոք հասաբակ դասակարգից սկսած մին-  
չև անգամ թափաւորները վափագում են տես-  
նելու և յարգանք մատուցանելու մի խոնարհ  
և համեստ գիւղական բժշկի, որի բազմաշաբ-  
շոր և անխօնն աշխատանիքի արդիները պէտք  
է ազատեր, վիրեր մարդկութեան նորածիւ-  
ներից:

Այսպէս վառքով և պատով պսակւած-  
էդուարդ Զենները մինչև իւր մահուան վեր-


Հին օրերը մնում է իւր հայրենի Բերկլէյի  
գիւղաբաղաբում, որտեղ և մի քանի անգամ



Եղուարդ Զենները պատուատում է իւր որդուն:

Արձան կանգնեցրած Լուղոնում:

Կաթուածահար լինելով, վախճանուում է 1823



Եղանակ Զենքնի բնակությունը, պահ Խ. Վահանանում է 1823 թ. առաջ. 24-ին:

թւին յունվարի 24-ին 74 տարեկան դառամնեալ հասակում:

Եղուարդ Զենքները թողնում է գրուածքները մասնագիտութեան մասին, որոնց մէջ յայտնի է միայն 60 երեսից բազկացած մի գիրք, «Հետազօտութիւն կովի ծաղկի պատճառի և աղղեցութեան մասին» կոչումով:

### Բ. ՄԱՍՆ.

Զենքների ծաղկահատուքեան կամ ծամկի պատասխան

**Առաջին պատուաստումն (Վականագի)**

Ա. Պլուս.

Պարագայք ծաղկահատութեան համար.

Ծաղկահատութեան պարագաները հետեւալներն են՝ 1. պէտք է վերցնել մի բաժակ ևու եկած մաքսուր ջուր, մէջն ածել մի թէկի գգալ «Ուկեբորակսկան բըրւուս—բունայա կիսլատա» (борոյա կուլատա<sup>1)</sup> և խառնել այնքան մինչև որ պարզուի և ստացուի մաքուր, զտուած ախտահանական—դեղինֆէկցիօնի (դեցինֆէկցիօնայ водա) ջուր:

2.—Մի աման՝ ծաղկահիւթը ածելու հա-

<sup>1)</sup> Բորնայա կիսլատայ՝ պէտք է հարցնել գեղատներում:


մար, յատակը խորնընկած պստիկ աղամանի շափ:

3.—Մաքուր, զտուած խոնաւաչափակ սԲ—գիկրոսկոպիչեսկի (гипроскопический ват) <sup>1)</sup> բամբակ:

4.—Ծաղկահատութեան վերջին տեսակի դործիքը նշանարը (լանցեր), որը բաղկացած է երկու մասից կոթոց և ասեղոց: Կոթը շինուած է լինում փայտից կամ փղոսկրից, զանազան երկայնութեամբ: Դորա մի ծայրի վրայ ամբացրած է լինում ասեղը, որի ծայրը վերջանում է նշանարի նման, եռանկիւնով: Այդ եռանկիւնու ծայրը սուր է և բարակ ապա գէպի կոթի կողմը լայնանում է եռանկիւնաձև և վերջանութիւններուն բարականում, որը և ամբացրած է լինում կոթի վրայ: Այդ եռանկիւնու մի հետո տափակ է և վրան տկօս ունի (երկարութեամբ փոս ունի). իսկ միւս երեսը փարքինչ կորընթարթէ: Ասեղը պահելու համար՝ զործիքի կոթը բուն ունի, որը պտուտակով կէս է լինում, որի մէջ է պահուած ասեղը:

5.—Թարմ ծաղկահիթը՝ ստացւած հոթից: Ա. ծաղկահիթը ածած կըլինի փոքրիկ ապակեայ խողովակածի շիշերում,  
<sup>1)</sup> գիկրոսկոպիչեսկի բամբակ պէտք է հարցնել գեղասաներու:

որի երկու ծայրերն էլ զմուռով փակուած է լինում, որպէսզի դրսի օղը չըմտնի շիշերը և չը փշացնէ ծաղկահիթ:



Ծաղկահատութեան վերջին տեսակի զործիթները

թը: Բ. ծաղկահիւթով լի շիշերը պէտք  
է պահուի մաքուր, չոր նկուզներում  
(պագւալներում) բամբակում փաթաթած  
և արկում դարսած: Գ. ծաղկահիւթը կը  
պահուի 5—6 ամիս, եթէ նկուզների օ-  
դը հաւասար է թէօմիւրի 0°/0-ին: Դ.  
գործիքը միշտ մաքուր պէտք է պահուի,  
չպէտք է ունենայ մէ կեղտառութիւն  
և նախ քան պատուաստելը և պատուաս-  
տելուց յետոյ էլ, ախտահանական ջրով  
պէտք է մաքրուի գործիքը: Ե. պատու-  
աստուով նախ քան պատուաստելը պէտք  
է լողանայ կամ եթէ երեխայ է՝ մայրը  
պէտք է լողացնի:

Բ. գլուխ.

Ծաղկահատուրին կամ ծաղկի պա-  
տուաստումն (օսոպրivivatio)

Երեխային պատուաստել կարելի է եր-  
կու ամսականից սկսած, թէս երբունական  
կրթարաններում պատուաստում են երեք շա-  
տուի երեխան, այնքան օդտակար է և լաւ:  
առաջ երեխաններին կարելի է պատուաս-  
տել շաբաթականից սկսած, վարուելով նոյն

օրէնքներով, ինչ օրէնքներով պատուաստում  
են արքունական կրթարաններում: Լաւ է պա-  
տուաստել մեծերին զարնանը և աշնանը, ո-  
րսվճեակ այդ ժամանակներում օդը բարեխա-  
ռըն է. իսկ երեխաններին՝ ամեն ժամանակ  
կարելի է պատուաստել միայն հարկաւոր է  
պահել նրանց բարեխառն օդում: Երեխայի ա-  
տամների գուրս գալու ժամանակ, այսինքն՝  
երբ երեխայի ստամոքսը կանոնաւոր չէ, լու-  
ծում է, տաքութիւն է առիս, այն ժամանակ  
պէտք է սպասել չորս ամիս. որսվճեակ նա-  
տեսում է այդքան ժամանակ, որից յետոյ ստա-  
մոքսը կանոնաւորում է ու տաքութիւնն պա-  
կասում և տամները գուրս գալիս, սպա կա-  
րելի է պատուաստել: Բայց իսկական ծաղկի  
տարածման ժամանակ, չը պէտք է սպասել  
մինչեւ որ տամները գուրս գան, այլ պէտք  
է անմիջապէս պատուաստել:

Մայրերին խորհուրդ կը տամ չը թողնել  
ուրիշ երեխայից վերցրած հիւթով պատուա-  
ստել իրանց երեխաններին, որսվճեակ կարող է  
պատահել, որ վարակիչ հիւանդութեամբ հի-  
ւանդացած երեխայից վերցրած լինի հիւթը և  
պատուաստելիս վարակի նրանց, ինչպէս օրի-  
նակի համար սիֆիլիսով, որն որ շատ յաճախ  
է պատահում: Թէկ օրէնքով արգելուած է ե-  
րեխայից վերցրած ծաղկահիւթով պատուա-

տելը, բայց ստորին դասակարգի մարդիկ, ինչ-  
պէս օրինակ դալլաքնելը, որոնք զիտեն այս  
մասնագիտութիւնը միայն թերլի, վերցնում են  
երեխայից և պատուաստում մի ուրիշին։ Այդ  
գէպքում շըպէտք է թողնել որ վերցնեն ձեր  
երեխաներից հիւթը (թարախը, չիւթը), որով-  
հետ ումնից վերցնում են հիւթը, պատուաստը  
իւր զօրութիւնը կարցնում է և կարող է շու-  
տով էլ վարակուի իսկական ծաղկավ։ Զատ  
թիշիների կարծիքով՝ պատուաստը իւր զօ-  
րութիւնը պահում է 7—8 տարի և աւելի  
բայց սրանից յետոյ՝ արդէն կորցնում է իւր  
զօրութիւնը և պատուաստուածքը, եթէ կրկին  
անգամ շըպատուաստուի, կարող է վարակուել  
իսկական ծաղկով, որ և շատ անգամ անվնաս  
է անցնում։ Եթէ մի տան մէջ երեխաներից  
մէկը վարակուեց իսկական ծաղկով՝ պէտք է  
բոլորին տնիւափիր, հիւանդին թէ առողջին  
պատուաստել և միայն իննեւորդ օրից յետոյ  
կարիլի է ապահով մնալ, որ այլ ևս ոչ ոք  
պատուաստուածներից չէ կարող վարակուել  
իսկական ծաղկով։ Երբեմն երեխային պատու-  
աստելոց մի օր կամ երկու օր կամ թէ չէ  
միենայն օրը երեխան վարակում է կարմրու-  
կով, որով պատուաստի շըջանը ուշանում է  
մինչև կարմրուկի վերջանալը։ Երբեմն էլ ա-  
ռանց վարակուելու կարմրուկով, ուշանում է

պատուասակ շըջանաբութիւնը, այդ պէտք է  
վերակրել, որ կամ հիւթը թոյլ է եղել կամ  
երեխային պահելիք ոչ բարեխառն օդում:

Նախ քան ծաղկի պատուաստելը պատուաստողը իւր ձեռների եղունգները կտրած պէտք է ունենայ, որպէս զի կեղա չը լինի եղունգների արանքներում և ապա օճառով (սապրոնով) մաքուր լուանալ: Յետոյ պէտք է լուանայ պատուաստուղի թեր կամ թերեր Ա. գլխում յիշուած մաքուր ախտահամական ջրով և սրբի նոյն գլխում յիշուած խոնաւաշափական բամբակով: Պէտք է լաց անի ծաղկաչիւթը ածած ամանի երկու ծայրերն ել և ծաղկահիւթը ածի Ա. գլխում յիշուած ակօսաւոր ամանում: Կամ թէ չէ կարելի է նոյն գործիքի ակօսում ածել: Պատուաստելիս պէտք է վերցնել ծաղկահիւթը ամանից, եթէ նրա մէջ էք ածել, և ապա պատուաստել: Պատուաստելու ժամանակ գործիքը պահպէս պէտք է բանել աջ ձեռքով, ինչպէս բանում ենք գրչակոթը գրելիս—երեք մատով: Չախ ձեռքով պէտք է բանել պատուաստուղ երեխայի կամ տղամարդու թեր (աջ կամ ձախ) ուսին կից մային մասը—մեծ մկանը (දելտունդայ մասը) և ձգած պահել մինչև պատուաստման գործողութեան վերջանալը:

լուց յետոյ, պէտք է ծաղկահիւթով լի գործիքը, անցկացնել ուսից ներքեւ իգական սեռին աւելի ներքեւ, վերնամաշկի միջով, ակօսը վերեւ ուղղած։ Պատուաստելիս գարծիքի ակօսի մի երրորդ մասը, հիմնով լի պէտք է մացնի պատուաստողը պատուաստուողի մաշկի մէջ եւ ոչ աւելի եւ ապա շուր տայ մաշկի միջում, այսինքն՝ ակօսը ներքեւ անէ, որպէսողի ակօսի մի երրորդ մասում եղած ծաղկահիւթը թափուի մաշկի մէջ եւ միախառնուի արեան հետ։

Այն պատճառաւ ակօսի միայն մի երրորդ մասը պէտք է մացնի մաշկի մէջ, երկու երրորդը գուրս պահի, որպէսողի ակօսի երկու երրորդ մասում եղած ծաղկահիւթը վակի պատուասի բերանը, խառնուելով մարմնից դուրս եկող արեան հետ։


Այս դէպքում պատուաստողը պէտք է զգոյն լինի, այսինքն՝ նայի երեխայի կաղմուածքին։ Արդիօք երեխան առնդջ է թէ նուազ կամ հիւանդ։ Եթէ երեխան առողջ է և արիւնոտ, այսինքն՝ արիւն շատ ունի, այն ժամանակ գործիքը այնպէս պէտք է անցկացնի մաշկի մէջ, որ երեխան ոչինչ չգտայ, նրան այնպէս պէտք է թւայ, որպէս թէ ասեղով ծակելիս լինեն։ Այս դէպքում արիւն քիչ դուրս կըգայ, իսկ եթէ շատ դուրս գալու լինի, այն ժամանակ՝ անցրը պէտք է վակել ծաղկահիւ-


թով, նորից վերցնելով ծաղկահիւթ գործիքով և բսելով վերքի բերանին։

Եթէ պատուաստուող երեխան նուազ է և սակաւարին, այն ժամանակ թել լուանալիս, պատուաստելուց առաջ, այնքան պէտք է քսէ պատուաստողը այդ երեխայի թեկն բամբակով կամ չոր կտորով, որ կարմրի, արիւնը մի տեղ հաւաքուի և ապա պատուասէ վերելիշած ձեռով։ Եթէ հասակաւոր է պատուաստուողը, պատուաստելիս գործիքը աւելի խորը պէտք է մացնէ մաշկի մէջ, որին նա աւելի կը դիմանայ։

Պէտք է պատուաստել աջ կամ ձախ թեկի կամ երկու թեկի վրայ էլ ուղղահայեաց ձեռով 3—5 տեղ, եռանկիւնաձև կամ խաշաձև։

Ահա այս ձեռով՝





*a.* Պատուաստուած տեղերը թեփ վրայ մինչև 3-րդ օրը:

*b.* Պատուաստուած տեղը 7 երրորդ օրը, կենդոնի զօգուած, շուրջը սպիտակ և թեփնցիկ թեփն ուռոցցրով:

*c.*—8-րդ օրը, ուռոցքը մեծացած բորբոքւած շրջանակով շըրջապատւած:

*d.*—9-րդ օրը, իւր կատարելութեան հասած ժամանակ, կենդոնի փոքր փոքր է և ուհագոյն և կեղով պատած է:

*e.*—11-րդ օրը, կարծը, տափառակ և առանց հեղուկի:

*f.*—12-րդ օրը, վերնամաշկը ծակած:

*g.* Ըստակայ թիթեղներ պատուաստ պահելու համար:

*h.* Մաղանման խողովակներ, որոնց

ծայրերը զմուռով (սորցուչով) պուրգուչով փակուած է և որոնց մէջ ածած կայ ծաղկանիթը:

Ոբովհետեւ մեր ժողովրդի մէջ սովորութիւն չըկայ և պաշտօնապէս էլ չէ հրամայուած, երլրորդ անգամ պատուաստելը (կրկնապատուաստել), ուստի առաջին անգամ պատուաստելիս հարկէ երկու թեփ վրայ էլ 3—5 տեղ պատուաստել, որով աւելի երկար ժամանակ աղահով կրկնինի խսկական ծաղիկի վարկումից: Այս եղանակը գործ է ածում գերմանական հիւանդանոցներում: Զտաբերը՝ նշ պատուաստուած են լինում և նշ վարակուում են խսկական ծաղկով և այս բանը պէտք է վերակրել այն բանին, որ նրանց կազմուածքը տրամադիր չէ, այսինքն՝ տրամադրուած է լինգուինելու այդ հիւանդանութիւն: Պատուաստուած տեղերը այնքան հեռու պէտք է լինեն իշրարից, որ հասունութեան և կատարելութեան հասած ժամանակ իրաք հետ շըմիանան և շուռչեն ու աւելի ցաւ շըպատճառեն երեխաշին: Խոկ եթէ պատուաստովի անգուցութիւններ վերքերը իրաք հետ միանան նից պատուաստի վերքերը իրաք հետ միանան ու ուռչեն, այն ժամանակ պէտք է քսել ուռած տեղերում սպիտակ վազելին (ճնլայ վազելին) մազր օրը 2—3 անգամ և ուռոցքը կընսաի: Որպէսզի երեխան շըքորի պատուաստինսաի:

տուած տեղերը, արին չրդուրս գայ և ցաւը շընորոգութ, հարկաւոր է որ պատուաստուած թերի վրայ փաթաթել ախտանիական բաժրակ և կապել, այն ժամանակ ինչքան երեխան աշխատի քորել, չի կարող վնաս տալ վերքելին:

Հատ երեխաների անհանգստութիւնից և թեր շարժելուց, թեի տակը զոյանում են խուլեր, որոնց սպիտակ փազելին քսելով՝ կը կորշեն:

Վերոյիշեալ գործողութիւնը կոչում է ծԱզԿԱՀՍՏՈՒԹԻՒՆ կամ ծԱՂԿԻ ՊԱՑՈՒԱՍՏՈՒՄՆ (Վակցիա), վէրը՝ ՊԱՑՈՒԱՍ, (Վակցիա) իսկ կովը լատիներէն լեզով՝ ՎԱԿԿԱ (Վակցիա):

Պատուաստելուց յետոյ պատուաստած թեր պէտք է ապատ պահուի որկիցէ առարկայի քսուելուց, որպէսզի հիւթը չըսրբուի: Պատուաստի չօրանալու համար հարկաւոր է ամենաքիչ  $\frac{1}{2}$  ժամ: Եթէ պատուաստուով երեխայ է նրա մօրը պէտք է պատուիրել լուզայնելու նրան, պատուաստուելու հետևեալ երրորդ օրուայ երեկոները ու մինչեւ անզամ կարելի է և առաջին հինգ օրերը շաբանակ լողացնել առանց օճառի (սապոն). իսկ եթէ հասակաւոր է՝ պատուիրել բամբակավ վերցնել վրայ ու շրացնել չոր բամբակով: Այս միջու

ցը օգտակար է այն պատճառով, որ նախ մաքուր լինելուց, կեղտոտութիւնը չի մտնի պատուաստի մէջ հիւթի հետ միասին, երեւրորդ լողացնելը կամ լուանալը զօլեղացնում է պատուաստը և աւելի հասունացնում ու պարարտացնում, և ոյժ տալիս աւելի շուտ երեւալուն:

Պատուաստի տեսղութիւնը մինչեւ բոլոր բովին լաւանալը բաժանում է չորս շրջանի, որոնք ունեն առանձին-առանձին անուններ:

### I շրջան

Պատուաստելուց յետոյ անցնում է երեք կամ չորս օր և կարծես թէ պատուաստած կամ չորս օր և կարծես թէ պատուաստած անձի պատուաստած աեղերում ոչինչ չէ երեանձի պատուաստի օրուայ կոչում է՝ Անտում: Այս ժամանակամիջոցը կոչում է՝ Անտամ ՅԱՅՅ ԳՐՈՒԹԻՒՆ, (скрытое состояние) և տեսմէ է 1—4 օր:

### II շրջան

Պատուաստուած անձը երբորդ կամ չորս լողացնել առանց օճառի (սապոն). Պատուաստորդ օրը տաքութիւն է ունենում: Պատուաստուած տեղերում երեսում են մանը բշտիկներ, որոնք համեստու են իրանց կատարելութեանը: Այսակեղ հարկաւոր եմ համարում ասել, որ շատ

երեխաների, որոնց մարմինը աւելի արամազրւած է (ընդունակ է) ընդունելու զանազան հիւանդութիւններ, բչափիների երեալու հետ միասին, ամրող կուրծքին և թերերի տակ գուրսցից պէտք չէ վախենալ, որովհետեւ մի քանի օրից յետոյ իրանց իրանց անյայտանում են: Բշտիկը շորբորդ օրը՝ դատնում է ըստցի զլիի չափ: Պատուատուած տեղերում եթէ նուադ մանը բշտիկներ երեան, այդ նշանակում է որ պատուատը թոյլ է և որպէսզի զօրեղացնել, երեխային լաւ է տալ տաք վաննայ որով բըշտիկները աւելի խոշոր կերեան: Որպէսզի պատուատը համարուի յաջող, պէտք է անպատճառ ամենաքիչ երկու բշտիկ երեայ պատուատուած տեղերում և եթէ մէկն երեաց՝ այն ժամանակ այդ բշտիկում պարունակուած հիւթով պատուատի այլ անդում: Հինգերորդ օրը՝ բշտիկը մեծանում է և թողնում իր միւնք լսունի շրջանակի պէս: Վեցերորդ օրը՝ կրկին մեծանում է թէ բշտիկը և թէ շրջանակաձև կարմրութիւնը և երեսում է սպիտակագոյն թարսիք: Այս միջնորդ կամաց-կամաց շատանում է տաքութիւնը: Այս ժամանակամիջնորդը կաշում է գորիս ՏԱԼ (վասնակ) և տեսում է 4—7 օրը:

## III օր ջան

Եօթներորդ օրը՝ պատուատը մեծանում է, թարախը աւելանում և շրջանակաձև կարմրութիւնը շատանում ու պնդանում: Ութերորդ օր՝ թարախը աւելանում ու շատանում է, կարմրութիւնը նոյնպէս աւելանում ու տարածում արեի շողբերի նման: Իններորդ օրը՝ թարախը հասնում է իւր կատարելութեանը, պատուատը միծանում և գերիանում է, կարմրութիւնը պակասում և կամաց-կամաց ֆափկում ու շուրպ չը սկսում է չորանալ: Այս ժամանակամիջնորդը կոշտում է լՔՅՄՆ (վաևան) ժամանակամիջնորդը և տեսում է 7—10 օրը:

## IV օր ջան

Տասներորդ օրը՝ պատուատը հասնում է իւր կատարելութեան, մեծութեան և զօրութիւն: Այն օրը պատուատուածը ունենում է թեան: Այս օրը պատուատուածը ունենում է սպատիկ տաքութիւն, անհաճելի ցաւ, ձեռքի սաստիկ տաքութիւն, անհաճելի ցաւ, ձեռքի տաքութիւն, կորցնում է ուտելու ախորժակ, ծանրութիւն, կորցնում է ուտելու ախորժակ, ծանրեմն փոքր կապում է և զիխցաւ է ստակերեմն փոքր կապում է և զիխցաւ է ստակերեմն փոքրը առաջած վշաններում (I, II, III,) տաքութիւնը յիշուած վշաններում է. իսկ այս

Հորբոսդ վրջանի առաջին օրը, այսինքն՝ տասներրդ օրը, տաքութիւնը սաստկանում է և 12—24 ժամ տեղով՝ յանկարծ պակասում է և պատուաստուած երեխան թեթևանում է ցաւից և աաքութիւնից, կրկին ստանում է ուտելու ախորժակ և ձեռքի ցաւը թեթևանում է: Պէտք է գիտենալ, որ քանի երեխան տաքութիւն շատ ունի, այնքան ծաղկի պատուաստը զօրեղ է, և այնքան նա (պատուաստուածը) պատ է իսկական ծաղկի վարակումից: Եթէ պատուաստուած երեխային երկրորդ օրն և ետերեայ բշտիկներ, այնժամանակ պատուաստը օրուայ միջոցում բոլորովին վերջացրած նի իւր ժամանակամիջոցը: Այսպիսի պատուաստը անօգուտ է և պատուաստուածը կարող է համար հարկաւոր է նրան նորից պատուաստել միայն երկու շաբաթից յետոյ. իսկ եթէ մանակներում, այն ժամանակ անմիջապէս, միւս թեր վրայ պատուաստել: Վերոյիշալ տեսակի ծաղկիը կոչում է ՍՈՒՏ ծԱՂԻ:

Սաստիկ տաքութեան և փորկապութեան ժամանակ, լաւ է տալ երեխային խաչն-դեղից — նեկանդից պատրաստած օշարակ (շարրաթ, սերոփ) օրը 2—3 անգամ թէյի գդալով փորը փափուկ պահելու համար: Խաչնդեղի օշարա-

կը (Քենանի սրություն) կարելի գտնել ամեն դեղատներում:

11, 12, 13,—15-րդ օրը պատուաստի թարախը կարծրանում է, չորանում և վայր ընկնում: Առաջին անգամ վայր է ընկնում մինչև 16-րդ օրը և երկրորդ անգամ 16—28-րդ օրը, թողնելով հետք, որը և շատ անգամ մնում է մինչև մահը: Այս հետքը գեր մզագոյն է լինում որ և զանազանուում է իսկական վերնամաշկի գոյնից և միքանի ժամանակ անցնելուց յետոյ զառնում է նոյն գոյնի, ինչ գոյնի է վերնամաշկը, միայն փոքր ինչ տարբեր նրանից:

Զատ անգամ ուշանում է չորսրորդ շրջանի ժամանակամիջոցը: Այս ժամանակամիջոցը կոչում է 20ՐԱՅՈՒՄՆ (զաւահան) և տեսում է 10—28-րդ օրը և երբեմն էլ աւելի ուշ:

Պատուաստուածի մօրը պէտք է պատուելու, որ վերե յիշուած ժամանակամիջոցներում երեխային հագցնէ լայն թևաւոր շալիկ, մանաւանդ տղայոցը: Եթէ օրօրոցումն է պառկեցնում պատուիլու, որ ուժգին շրկապէ կապանը, տշխատէ հեռու պահել պատուաստուած թեր մի որ և է քանի ընդհարումից—քսուելուց: Պէտք է աշխատի շրմբսեցնել, շուտ շուտ փոխել շալիկը: Հատակաւոր պատուաստուածը նոյն դգուշութիւններ պէտք է ունենայ, մինչև

պատուստի լաւանալ: Երբեմն պատուաստուած երեխան միայն սակաւ տաքութիւն է ունենում, իսկ պատուաստը չէ երեսում և այնպէս անհետանք է անցնում: Պատճառը երբեմն ցրառութիւն է լինում, երբեմն էլ հիմթի անպէտքութիւն ու անզօրութիւնը: Այս չէպքում պէտք է կրկնել առաջին պատուաստումը, միայն 3 շաբաթից յետոյ, միւս թե ի վրայ եթէ մի թե ի վրայ էք պատուաստել. իսկ եթէ երկուակի վրայ էլ էք պատուաստել, այն ժամանակ կարելի է նոյն թեերել վրայ պատուաստել: Եթէ կրկին անգամ պատուաստելուց յետոյ էլ չերեայ, կրկնեցէք երբորդ անգամ էլ եթէ այս անգամ էլ չերեայ նշանակում է երեխայի կամ պատուաստուղ անձի մարմինը տրամադրուած չէ այդ հիւանդութեանը, այսինքն՝ չի վարակուի իսկական ծագիով: Երբեմն երեխան իւր մօր արգանգում եղած ժողովում է վարակում իսկական ծագիով և ծնուելուց յետոյ բշտիկները լաւացած են լինում և հետքեր երեսում կամ ոյն էլ չէ ենթառում: Երբեմն էլ ծնուելիս բշտիկներով է նում ու հետքեր թողնում:

Գ. գուփի.

Կրկնապատուաստումն (Ревакцинация), Ա-

րովհեակ՝ ինչպէս սկզբում ասացինք, պատուաստուած անձը 7—8 տարուց յետոյ կարող է վարակուել իսկական ծագիով, այս պատճառով աշքի առաջ ունենալով այդ վնասով՝ կը բկնապատուաստումն են կատարում, որը տարածաբար օրէնքով պարտազիր չէ:

Կրկնապատուաստում են նրան, որոնք առաջին անգամ պատուաստուել են և կամոնաւոր ընթացք է ունեցել պատուաստումն:

Նշնպէս է կատարուել կրկնապատուաստումը, ինչպէս առաջին պատուաստումն, միայն 5—6 օրուայ միջոցում տաքութիւն է ունենում, զուրս է տալիս մանիր քորոցի զիսի շափլըցում ու չորանում, վայր ընկնում հեաքը չըթողնելով:

Օգագար է միշտ երեխային պատուաստել 3—4 տարի մի անգամ, որովհեակ երկիւզ չի ունենայ վարակուելու իսկական ծագիով: Եթէ հակառակ դէպքում, իսկական ծագիկ շատութեան և վնասակարութեան միջոցումն, վնասակարուի էլ կրկնապատուաստուծը, անվարակուի էլ կրկնապատուաստուածը, վնաս է և թեթև կանցնի և ուրիշ անգամ էլ վնաս է վարակուի իսկական ծագիով: Նկատուած է չի վարակուի իսկական ծագիով: Նկատուած է որ ինչքան ուշ վարակուի մարզո իսկական ծագիով, այնքան վնասակար է և մահացու: Ծագիով, այնքան վնասակար է և մահացու: Լաւ է պատուաստել, նախ երեխայ ժամանակ (3—6 ամս.), երկրորդ՝ ուսումնարան տալիս

(7 шар.) և երրորդ՝ զինւոր գնալիս (20 տարեկան ժամ.). որից յետոյ՝ էլ երկիւղ չըկայ վարակուելու խակական ծաղկով:

Այն գաւառացի կարգակիցներիս, և առաջարակ բոլորին, որոնք պարապում են կամ կըպարապեն այս մասնագիտութեամբ, խորհուրդ կըտայի ձեռք բերել նոր ստացւած վերջին տեսակի ակուստոր գործիքները (Лак-цеты, Тифлисъ, Кавк. Т-ва Торг. Ант. Тав. уг. Гановская и сололацкая ул. складъ тогоже то-ворицъ, на теат. ул. собст. домъ. отлѣл. магази-на Михайловскій проспектъ № 101.:

Հակ հորթից ստացուած թարմ ծաղկա-հիթը (Лимօա), կարելի է ձեռք բերել բժիշկ Աթանագինէ Գաբրիէլեան Մելքոնմեանցի մօտ (Աթինացին Գորիալ. Մելկոմովъ որ. Անդրեև. և Մելիկов. որ. № 7—8 և ուրիշների մօտ:

Գործիքները ծախտում են զանազան գը-կաձե շլշերում տծած՝ հատը 11, 12, և 15 կոպէկ ու աւելի, նայած շիշ (трубочка) մե-ծութեանը:

#### Գ. ՄԹՄՆ.

Հորի պատուասումն

(Օսոպրивованіе телячи)


Ծաղկահիթը մեծ քանակութեամբ ու-նենալու համար, որովհետև գժնարութեամբ է գանում խակական ծաղկով վարակուած կո-վը, որից կարելի լինի ստանալ թարմ ծաղ-կահիթը, այդ պատճառով հարկաւոր է պիտի-նալ հորթի պատուաստելը:

Մի քանի ամսուայ կովացու հորթին (ու-րովհետև եղացուն անհարմար է) պատկացնում են նրա համար պատրաստած առանձին սե-ղանի վրայ, որի երեսը պատած է թիթեղով զանի վրայ, որի երեսը պատած է թիթեղով զանի օվակ շնած (3—4) որից և ունի մի քանի տեղ օվակ շնած (3—4) որից ամբացնում են ոտները և գլուխը, որպէսզի պատուաստման ժամանակ հորթը չը շարժվի: Նախ քան պատուաստել պատրաստի ունենալ, նախ գործիքը, որը նման է մարդկային նախ գործիքը, որը նման է մարդկային պատուաստման գործիքին, միայն աւելի խոշոր

(մեծ), երկրորդ՝ թարմ ծաղկահիւթը կովից կամ նոր պատուաստուած երեխայից վերցրած: Երբորդ՝ ախտահաճական ջուրը և խոնաւաչափական բամբակ:

Այս բալորը պատրաստի ունենալուց յետոյ հորթի փորը պէտք է ածիլել աւելորդ մաղերը հեռացնել, մաքրել, լւանալ ախտահաճական ջրով և սրբել խոնաւաչափական բամբակով: Մի կաթիլ ծաղկահիւթով կարելի է պատուասել հորթին մօտաւորապէս 20 տեղ: Առհասարակ պատուաստում են հորթին 60—120 տեղ և ոչ մի վնաս չի հասցնում հորթին:

Պէտք է պատուաստել նոյն ձեռվ ինչ



Պատուաստուած նորը

ձեռվ որ պատռաստում են մարգկանց:

Պատռաստելուց յետոյ՝ չորրորդ օրը, հորթի վրայ, պատռաստուած աեղերում հերեւում է մանը կարմբագոյն պինդ բարձրութիւններ, ցորենի հատիկների մեծութեամբ, որոնց զլիխն գոյանում են խոցեր. Եթէ ասես զով ծակենք վերոյիշեալ խոցերը նրանցից զով կրպայ սպիտակ պարզագոյն ծաղկահիւթի կաթիլ:

Հինգերորդ օրը՝ խոցերը մեծանում են, տարածում ու փոխարինուում ծաղկի, սիսևսի մեծութեամբ, որը մշջանդում ունենում է խորնութիւն և շրջապատւած է լինում կարմբագոյն նեղ շրջանակով:

Վեցերորդ օրը՝ ծաղկիը սկսում է լրցել, պարզ, մաքուր ջրով: Ծաղկի շրջանային կարմբութիւնը տարածում է, կաշին մի քիչ ուռչում է: Եթէ այն ժամանի շոշափենք հորթի ստամոքսը, կարելի է նկատել որ հորթը տաքութիւն ունի և զգայուն է:

Եթզդ և Եթզդ օրերում միայն կարելի է ստանալ խոկական ծաղկահիւթը: Հիւթը պէտք է վերցնել հետեւեալ կերպով.—ասեղի ծայչ է պէտք է ծակել խցիկի վերեի մասից, բով պէտք է ծակել խցիկի մասից, հանել ասեղը և նրա ծայրում գտնուած հիւթը ածել ապակեայ շիշերում կամ թէ չէ տւելի:

հեշտ կերպով, հենց շըշի մի ծայրով հուփ տալ խոցի վերի մասից և հիւթը ինքն իրան կը բարձրանայ շիշերում, որի երկու ծայրերն էլ անմիջապէս պէտք է փակել զմուռով, օգը շմտնելու համար, և պահել նկուղներում:

Հենց այդ նոր ծաղկահիւթով կարելի է պատուաստել երեխային, որը ոչ վնասակար է և ոչ ուղցնող, այլ աւելի զօրէդ է ու աւելի լաւ:


7-րդ օրը՝ ծաղիկը լրիւ լրցւում է պարզագոյն հիւթով, կարմրութիւնը ծաղկի շուրջը հասնում է իւր լրիւ կատարելութեան (մեծութեան) և դառնում է մուգ կարմրագոյն, բայց նիւթը կորցնում է իւր աղտարար ոյժը, որից և չէ կարելի վերցնել հիւթ:

8-րդ օրը՝ ծաղիկը աւելի ևս մեծանում է, հասնում է երբեմն լոբու մեծութեան: Նրա միջի պարունակած հիւթը, պղառըւում է և թանձրանում, կարմրութիւնը աւելի մգանում է եւ մեծանում:

9-րդ օրը՝ ծաղկի կարմրութիւնը աւելի ևս մգանում է և գունատում, հիւթը փոխում դառնում է թարախ (դախլ, շիբք), ծաղիկը մգագոյն է դառնում:

10-րդ օրը՝ ծաղկի միջում գտնած թարախը չորանում է մէջտեղից սկսած դէպի ափերը, կարմրութիւնը հազիւ նշմարւում է:

11-ի 12-րդ օբերում երկում է որպէս շոր, մուգ կինամոնագոյն (գարշնագոյն) որը 8—10 օրից յիտոյ սկսում է վայր թափուել,



Պատուասը | ւր կատարելուրեան նասած ժամանակ-

Ժողնելով կոլոր, կարմրաւուն հետքեր:

Պատուաստուած հորթերին պէտք է պահել առանձին մաքուր, տար տեղերում, որտեղ կը մնան մինչև պատուաստման շրջանի վերջանալը, այսինքն մօաւորապէս 10—12 օր, չըգուրս չըբերելով:

Պատուաստուած հորթի տակը պէտք է փրել մաքուր, փափուկ խոտ, կերակրել կտթով, որն որ պաղ պէտք է չըլինի և զգուշանալ մրացնելուց հակառակ անցքերի քամուց:

Պատուաստը մաքուր և ամբողջութեամբ պահելու համար, հորթի փորին, փափուկ և մաքուր կտորով փաթաթել:

Որպէսզի միշտ թարմ հիւթ ունենաք, պէտք է մէկ հորթի 4-րդ օրուայ պատուաստուած հիւթից պատուաստել երկրորդին, երկրորդից—երրորդին և այլն, այսպէս շարունակել որքան որ կը կամենաք, միայն ոչ միենոյն հորթի վրայ այլ ուրիշ շր պատուաստուած հորթին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0270345

ԻՄ ԱզԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

1. Համառօտ ձեռնարկ ծաղկահատութեան կամ  
ծաղկի պատուաստման (սպառւած) . . . . 5 լ.
2. Ինքնուսուցիչ հայերէն և վրացերէն լեզուի 20 լ.

Գինն է 10 կող.

---

Գրքերը վաճառւում են թիֆլիսի բոլոր  
գրավաճառանոցներում և աշխատասի-  
րողի մօտ (Винный подъемъ собств.  
ДОМЪ).

Գումարով գնողներին 30% զեղջ:

3794